

35.

ՀՐԱՄԱՆԻ ԹԻՒԻ «ՀԱՍԿԵՐ» ԱՐՈԱԳԻ

437

№ 8

3231

ԱԹ. ԽՆԿՈՅՑԵԱՆ



ԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԱՐՁԸ

Ժողովրդական նկար



891.990

Խ - 64

Թ Բ Ֆ Լ Բ Ո

ԵԼԵՎՐԱՎԱՐ ՅԱՊԱՆ ՕՐ. Խ. ԱՌԱՄԵԱՆ, ՊՈԼԱ. 7
1909

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՅԱՍԿԵՐ“ ԱՐԱՐԱՐ

891.99.5.

Խ-644

№ 3

5

ԱԹ. ԽԵԿՈՑԵԱՆ

ԻԿԱՑԻՆ ՈՒ ԱՐՁԸ



1006
29454
9

1224


5435-Ա2



ԲԻՖԼԻՄ

ԷԼԵՔՏՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ, ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՊՐԵՍԻ

1909



Գիւղացին
ու արջը

Գիւղացին իր բոստանում
Փարնանը սերմ էր ցանում:
Արջը եկաւ՝ բարև քեզ,
Ի՞նչ ես անում քեզ ու քեզ:
Արի, այ մարդ, միանանք,
Մէկտեղ անենք վար ու ցանք.
Վար ու ցանքը մեր կիսրար,
Հունձն էլ անենք հաւասար:

«Աշքիս վրա, արջ ապէր,
Օտար խօմ չենք, կուզես բեր,
Հէնց առաջին անգամը
Ցանենք մօտիս շաղկամը:
Ինձ արմատը հողումը,
Քեզ վրերն ու ցօղունը»:

— Ցանենք, ասաւ ապէրը,
Ինձ ցօղունն ու վրերը:



Քաղցր ու խոշոր շաղկամը
 Հողում տողեց աշնանը:
 Մեր ապէրն ու գիւղացին
 Շաղկամն հողից հանեցին:
 Ապէրն առաւ փրերը,
 Ընկերը արմատները:
 Արջը տեսաւ որ խաբւեց,
 Մարդու դէմը բիչ լարւեց.
 —Վայ, ինձ խաբէ գիւղացին.
 Կաց, էն միւս ցանոցին,
 Ինչ որ ցանենք հողումը,
 Նրան կը տամ ցօղունը:

Միւս տարի ցանոցին
 Արջին ասաւ գիւղացին.
 «Ապէր, արի էլի մենք
 Կիսովի մի բան ցանենք,



Արջը թէ հա, շատ բարի,
 Միայն անշուշտ էս տարի
 Ինձ արմատը հողումը,
 Քեզ փրերն ու ցօղունը:
 «Համաձայն եմ ես նորէն»,
 Էս հետ ցանենք մենք ցորեն:
 Մարդը գիւղէր իր բանը.
 Ապօրը հետ՝ իր տանը
 Ցորենն ածեց տոպրակը,
 Տւեց նրա շալակը.
 Տարան, ցանեցին արտը
 Բրդոտ ապէրն ու մարդը:
 Ընկերները յունիսին
 Արտն հնձեցին միասին:
 Մարդը վերցըրեց վերը,
 Իսկ արջը՝ արմատները:

Ձերեւու զօրուկ ուրիշ թշուաց
 Ձերաւու զօրուկ ուրիշ թշուաց



Արջը էլ չը համբերեց.
Էտոեղ մի լաւ փրփրեց.
—Հում կաթնակեր, խաբեքայ,
Անտառ կը գնա, դու ապա.
Տես՝ զըլուխդ ինչ բերեմ,
Միսդ վրէդ ըըրքըրեմ.
Արջը էտպէս նեղացած,
Թքեց մարդին ու գնաց:

Էլ չը սպասեց գիւղացին,
Յորենն հանեց կալոցին,
Հանեց, տարաւ ջրաղաց,
Յորենից ալիւր աղաց,
Ալիւրիցը հաց թըխեց,
Կուշտ-կուշտ կերաւ, ծիծաղեց:

Օրը ցուրտ է, ձիւն-ձմեռ,
Մըսեց մարդի ոտն ու ձեռ.
Կնիկն ասաւ՝ «սրտամեռ,
Գնա անտառ ու փայտ
բեր»:
Մարդն էլ երկար մտա-
ծեց.

Մի օր սայլը նա լծեց,
Ախ քաշելով անդադար
Քըշեց գնաց դէպ անտառ:
Մէկ էլ ճամփին աղւէսը՝
«Հլա սրա երեսը,
Լուն որ վրայից ընկնի՝
Հազար կտոր կը լինի:
Ի՞նչ ես թթւել, այ անճար,
Ադամորդի չաշ-բանջար.
Ասա, ի՞նչ է քո դարդը,
Ի՞նչ անճարն է էս մարդը»:

—Պարոն աղւէս, դու գիտես
Վերև Աստւած, դու և ես,
Արիւն կերթայ իմ սրտէս:
Թէ ինձ արջից ազատես,
Հինգ հաւ ունեմ չալտիկ, չաղ,
Հինգն էլ կանեմ քեզ մատաղ:
Լաւ, լաւ,
Հինգ հաւ,

Չաղ ու գէր —

Մէկ մէկ կեր:
«Բայց թէ ի՞նչ է պատճառը
Ասա, գտնեմ ես ճարը»:
—Էլ ի՞նչ ասեմ մի առ մի.
Արջը հետս է թշնամի,





Նրա ահից էս տարի
 Տանը եղել եմ գերի.
 Էսպէս սաստիկ ձմռանը
 Փայտ չես գտնի իմ տանը:
 «Դարդ մի անի, մարդ ախալէր,
 Գնա անտառ ու փայտ բեր.
 Թէ որ տեսնի քեզ արջը,
 Անվախ կանգնի առաջը,
 Ասա՝ այ արջ, դէհ փախի,
 Ականջներըդ մի կախի.
 Էս է կը գայ որսորդը,
 Որ տիկ հանի քո մորթը.
 Նա կասի՝ վահ... ի՞նչ անեմ,
 Դու էլ նըրան՝ եկ պահեմ,
 Եւ դու՝ մինչև իմ գալը
 Կոխիր արջին ջւալը»



Ես էլ կը գամ էս է էս
 Քո հետքից որսորդի պէս:
 Գնաց մարդը խիտ անտառ.
 Դեռ չէր կտրել նա մի ծառ,
 Զէնը լսեց էն արջը,
 Եկաւ ցցւեց առաջը:
 «Եկել ես հա՛,
 Լիրը, խաբեբայ»,
 — Սնւս կաց, ապէր,
 Սնւս, անհամբեր,
 Աստւած վկայ,
 Մեծ փորձանք կայ.
 Էս է կը գայ որսորդը,
 Որ տիկ հանի քո մորթը»



—Բա ի՞նչ անեմ. —Իմ հալը...
 —Արի, մտիր ջըւալը.
 Սայլի տակին քիչ պարկիր,
 Ու շունչդ քեզ հաւաքիր»,
 Մինչև որսորդի գալը՝
 Արջը մըտաւ ջըւալը:
 Իսկոյն եկաւ աղւէսը
 Դաշտ ու անտառի ոէսը.
 Եկաւ բեխերը սրած,
 Պոչը գետնովը փուած,
 Եկաւ սաստիկ բարկացած,
 Դունչը տնկեց ու գոռաց.
 —Էյ, եկ էստեղ, գիւղացի,
 Բան եմ ասում՝ իմացի.



Ես որսորդն եմ արքայի,
 Գիտե՞ս՝ ում եմ ման գալը.
 Քո բարեկամ չալ արջը
 Դեռ չէ տըւել իր խարճը:
 Զեմ հեռանայ քո մօտից,
 Մազ կանցընեմ քո քթից,
 Խոտ կը կոխեմ քո մորթը,
 Ասա, ուր է բըդուալ:

—Պարոն որսորդ,
 Լինեմ քեզ ճորտ.
 Ես չը գիտեմ
 Բանի հետ եմ...
 Արջն ինձ էլ է թշնամի...

—Ի՞նչ ես անում սուտ բամի.
 Բա էն ի՞նչ է սայլի տակ,
 Հիմի բաշեմ մի ապտակ.



—Կտրած ծառիս բոթուկն է...
 —Սրան տես ի՞նչ յանդուզն է...
 Որ էտպէս է, սայլին դիր,
 Ու պարանով պինդ կապիր.
 Փայտը սայլին կը գնեն,
 Ոչ թէ տակին կը պահեն։
 —Ես սհաթիս, աչքիս լուս,
 Խօսքդ չանեմ մէկն-երկուս։
 Մարդը հասաւ ջրւալին,
 Գրկեց զրեց իր սայլին,
 Բացեց թոկը, ըշտապեց,
 Սրջին սայլից պինդ կապեց
 Ու աղւէսի խօսքովը
 Իրա ձեռքի կացնովը
 Էնքան խփեց էն խեղճին
 Որ սատկեց սայլի միջին։



Մարդը ուրախ,
 Ազատ, անվախ
 Փայտը բարձեց,
 Մայլը լըծեց,
 Դրեց արջին
 Սայլի միջին
 Ու աղւէսին
 Սայլի ուսին,
 Ինքն էլ ոտով
 Եզան մօտով
 Ճիպտին տւեց, հօ արաւ,
 Բարերարին տուն բերաւ,
 Որ տայ չաղ-չաղ հաւերը։
 Բայց դեռ տանը չը հասած,
 Գիւղի շներն անխծած,
 Որ աղւէսի հոտն առան,
 Մեծ ու պստիկ դուրս թուան,
 Հարայ-հրոց հանեցին
 Ու աղւէսին լարեցին։

Բայց աղւէսը առաջ անցաւ
 Պոչը քաշեց, փախաւ, պրծաւ,
 Մի ծակ գտաւ,
 Մէջը մտաւ,
 Մի բիչ նստեց,
 Քիչ հանգըստեց
 Ու մարդու պէս
 Խօսեց էսպէս.
 — Էս ի՞նչ բան էր...
 Իմ անդամներ,

Ո՞րըդ կուզէր
 Ինձ, ձեր տէրին,
 Բաժին անէր
 Էն շըներին:
 Դուք՝ օրինակ
 Երկար-բարակ
 Թեթև-արագ,
 Իմ ոտիկներ.

«Ո՛չ, ո՛չ, մեր տէր,
 Մեր հէրն ու մէր,
 Ասին ոտներ»:

— Դուք՝ օրինակ,
 Վառած ճրագ,
 Լուս-արեգակ
 Իմ աշիկներ:

«Ո՛չ, ո՛չ, մեր տէր,
 Մեր հէրն ու մէր»,
 Ասին աչեր:
 — Ականջներ դժւը,
 Սուր-սուր լըսուկ,



«Ո՛չ, ո՛չ, մեր տէր,
 Մեր հէրն ու մէր»,
 Ասին ականջներ»:

— Եւ դժւ, պոչիկ,
 Իմ խուճուճիկ,
 Խուճճիկ, մուխճիկ,
 Ոսկէ փընջիկ.

«Այո, այո,
 Ուստա Նահօ,
 Ես կուզէի
 Քո ոտների
 Մէջն ընկնէի,

Որ դու գայիր զըլխակոնծի»:


— Սուս, պապանծի,
 Տանու դուշման,
 Բախտից փոշման,
 Անպէտք պոշիկ,

Ոչ ու փըչիկ,
 Ճալան-ճոթան,
 Մազոտ ճոպան,
 Հա մէջընկան,

Գետնի տափան,
 Վազրիս խափան:
 Էս սհաթիս ես քեզ ցոյց տամ,
 Կաց, շըների բերանը տամ»:


Ու աղւէսը
 Պոչի կէսը
 Հանեց մէկէն
 Խորը ծակէն,
 Էն շըներն էլ

3231




POTTER

Մեծն էր, փոքրն էր.
Ողջը կըծան,
Վրա պըրծան,
Գզին, գզւան,
Պոչին լըծւան
Ու քաշեցին
Քաշըշեցին,
Էն աղւէսին
Դուրս հանեցին,
Բուրդ դրեցին
Ու գրզեցին:



02/000

Մամի



16

Հայոց մամի



